



85. ԳՈՂՆ ՌԻ ՏԵՐՏԵՐԸ

Մի գող, մի տերտեր իրար հետ գնում են աստծու կուշար, որ իրանց մեղքերն ասեն, արդարանան:

Շատ են գնում, թե քիչ; մթնում ա: Սհանք մի գեղում դոնախ են ըլլում, տերտերը գնում ա մի հարուստի տուն, գողն էլ՝ մի քյասիբի: Էս գողը տենում ա էս քյասիբ կնիկը պղինձը գրել ա կրակին, ղլթղլթալա բան ա էփում:

Ասում ա.— Էս ինչ լավ ա, էսա մի բան կեփի, մի քիչ էլ ինձ կտա, ես էլ կուտեմ:

Սա նստում ա, ճամփա՛ յա պհում, ճամփա, համա էս կնիկը մի բան էլ ա բերում չի:

Ասում ա.— Այ քիրա, բա էսքան վախտը էդ ճաշը էփեց վե՞ր:

Ասում ա.— Է՛, ախպեր շան, ի՞նչ ճաշ, ի՞նչ բան, քարեր եմ ածել մեշը ընխանցը խափել եմ, ասել եմ կարտոփ եմ էփում ու տհենց էլ սոված սոված քնցրել եմ:

Էս կնգա գրիցը գողի սրտին շատ ա դժար գալի:

Ասում ա.— Ինչ կլի, կլի, սրան պետք ա հարստացնեմ:

Ասում ա.— Այ քիրա, կարա՞ս ասես, ըստի վեր տունն ա հարուստ:

Ասում ա.— Էս, էն, տհե:

Մին-մին մի քանի տուն ա շհանց տալի:

էս գողը քնըմ շի, էդ գշեր մի շորս ջվալ ալիւր ա. բերըմ, մի շորս ջվալ ցորեն, մի քանի վեշխար ու էս քյասիբին լավ հարըստացնըմ:

Մի վեշխար էլ մորթըմ: ա, էփըմ ին, ինքն էլ լավ կուշտ ուտըմ ա, ոավետը ասըմ ա.— էլ ես աստծու կուշտը չեմ գնալ, էսքան մեղք արի:

Սա ըտիյան եդ ա դառնըմ, գնըմ տուն: Տերտերն էլ ռավեղը վեր կենըմ, իրան ճամփեն շարունակըմ, գնըմ ա հասնըմ ասծու կուշտը: Հեռվից տենըմ ա էն դողը աստծու կողքին նստած:

Ասըմ ա.— Շան տղի գողը ինձանից շուտ գնացել ա, ընգի արթարացել ա, էլ ես գնամ ի՞նչ անեմ, մին ա՛ ինձ՝ ընդունիլ չի:

Թող ա անըմ, եդ գալի, ճամփին գողին տենըմ ա:

Ասըմ ա.— Բա դու ամոթ չտրի՞ր առանց ինձ գնացիր աստծու կուշտը:

Գողը ասըմ ա.— Ի՞նչ ես ասըմ, այ մարդ, ես էլ չի գնացի:

Ասըմ ա.— Խի՞:

Ասըմ ա.— Սհե-սհե բան արի, եկա եդ:

Նոր սրանք երկուան էլ իմանըմ են, որ իրան արածը աստծուն դուր ա եկել ու իրան արած լավութենի մհար աստծու աչքին լավ սա ըլել ու աստոծ նրա մեղքերին թողութին ա արել:

